№ 5 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 14 **1897** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 14 № 5

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՍԻՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

(25-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարվանը՝ 6 ռուբլի

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK».

ПОДПИСКА НА 1897 ГОДЪ НА ГАЗЕТУ

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

(ДВАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

Программа газеты: I. Правительственныя распоряженія. II. Телеграммы собственныхъ корреспондентовъ и «Россійскаго телеграфнаго агентства». III. Статьи по внутреннымъ вопросамъ. IV. Обозрѣніе иностранной политической жизни. V. Мѣстная хроника: засѣданія думы, обществъ и желѣзно-дорожныя новости. VI. Корреспонденціи. VII. Общая хроника—внутренняя и иностранная. VIII. Фельетонъ литературный, научный, повѣсти, разсказы и др. IX. Судебная хроника. X. Смѣсь. XI. Театръ и музыка. XII. Справочный отдѣлъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городская.		Иногородная.	
Съ доставкой: на годъ	5 р. — »	Съ пересылкой: на годъ	7 р. — к.
» » » полгода	3 » — »	» » » полгода . . .	3 » 50 »
» » » мѣсяцъ	— » 75 »	» » » 1 »	1 » — »,

Подписка принимается ИСКЛЮЧИТЕЛЬНО въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій проспектъ д. № 3. **въ Баку**, съ 15 декабря, въ «Справочной конторѣ» на Парапетѣ, **въ Батумѣ**—въ газетномъ агентствѣ М. Николадзе. 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ դեռ պարզ չէ. Հեռագիրներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կատակ է թէ... Գաղթականների օգտին. Կարսի հանանգի գաղթականների մօտաւոր թիւը և վիճակը. Ռուս եպիսկոպոսի նամակը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Գլադստոն և հայ պատգամաւորներ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Русская Мысль» ամսագիրը հայերի մասին.

ՄԻ՞ԹԷ ԴԵՌ ՊԱՐԶ ՉԷ

«Արարատի» վերջին համարում տպված է «Հոգևորականի առաջնորդող գաղափարը» անունով մի յօդուած, որ ներկայացնում է Էջմիածնի այժմեան հրապարակախօսութեան գոհարներից մէկը։ Ինչպէս և միշտ, փոխանակ պարզ խօսքի, փոխանակ գրական, որոշ ու հասկանալի մեղադրանքների, այդ յօդուածում էլ մութ ակնարկները, սրա ու նրա հասցէին ուղղած չարախօսութիւնները օձապտոյտ գծերով սողում են այնպիսի ֆրազների տակ, որոնք կարող են դիւրահաւան մարդուն մոլորութեան մէջ ձգել։ Հրապարակախօսութեան այդ ողորմելի ձևը, ի հարկէ, առաջ է գալիս քաջութեան պակասութիւնից, և բառերի այդ կուտակումները վերջ ի վերջոյ ստանում են իրանց արժանի անունը—ձրի բամբասանք, իսկ դա մի զէնք է, որ յատուկ է միայն պառաւներին և այն մարդկանց, որոնք չէին ուզի որ նոյն իսկ արեգակը ծագէր իրանց հակառակորդների գլխին։

Մի կողմ թողնենք այն հին երգը, որպէս թէ այժմեան հայ հոգևորականութիւնը կղերականութեան հոգուց հեռու է։ Այդպիսի երգերը երբէք չեն կարող ջնջել հրապարակում կանգնած փաստերը։ Եւ եթէ մենք լռում ենք, պատճառն այն է, որ ամեն օր խօսում են դէմքից, լեզուից ու իրաւունքից զուրկ հոգաբարձութիւնները, այն հրամանները, որոնք անխախտ են պահում Էջմիածնի ֆավորիտների դիրքը ամեն տեղ, ուր նրանք հաստատվել են։ Թողնենք այդ բոլորը։ Բաւական կը լինի մեզ համար և այն, եթէ կարողանանք յօդուածագրի մութ ակնարկները լուսաբանել և դրանով պատժել նրան։

Արձանագրենք նախ այն անսխալ իրողութիւնը, որ գտնում ենք յօդուածում. այդ այն է, որ «հոգևորականութեան, առանց այն ևս խախտված վարկը» չարունակ ընկնում է։ Ի՞նչն է դրա պատճառը։—Դուք, ի հարկէ, կը սկսէք իսկոյն թուել արդէն յայտնի և պարզ պահանջները. կրթութիւն, պարտաճանաչութիւն, սրոչ օրէնք ու կարգ, «հոգևորականութիւնը ժողովրդի համար» սկզբունքը։ Բայց սխալվում էք։ Էջմիածնի հրապարակախօսը գտել է բոլորովին ուրիշ պատճառներ։ Նա ասում է. «Մի ժողովուրդ, որ անմահացնում, հերոսների կարգին է դասում երբեմն (?) հոգևորական ոչ մի արժէք չունեցող հոգևորականների, և ընդհանրապէս կարծես չի տեսնում, կամ արհամարհանք և ատելութեամբ է վերաբերվում դէպի այնպիսիները, որոնք լուռ ու առանց աղմուկի իրանց պարտքն են կատարում, արժանի էլ չէ իսկապէս արժանաւոր հոգևորական ունենալու։ Դատավճիռը խիստ է, չէ։ Ովքեր են փառաբանված, հերոսացած հոգևորականները։ «Նա (խօսքը Էջմիածնի մասին է) պատրաստ է աչք խփել ամեն տեսակ բարոյական զեղծմանց և պաշտօնի վերաբերեալ զանցառութեանց դէմ միայն նրա համար, որ իր առաջինն, օրինակ, ուսում ունի, կամ ուրիշների ժողված փոստ, անցնել բոլոր տառապանքներից և փորձանքներից, անխախտ պահպանելով սակայն իրանց ազգային ինքնուրոյնութիւնը, իրանց հոգևոր կերպարանքը և ընտրոյ գծերը։ Կաջողվի նրանց այս անգամ էլ, ինչպէս չատ դարերի ընթացքում, պահպանել իրանց ինքնուրոյնութիւնը, թէ այդ ազգին նախասահմանված է անհետանալ XIX դարի վերջում, այն լուսաւորեալ Եւրոպայի աչքերի առաջ, որ փիլիսոփայօրէն խօսում է մարդկութեան վեհ սկզբունքների մասին, բայց չէ կատարում ամենատարրական բարոյական պահանջները,—ահա այդ հանգամանքը բացարձակապէս պէտք է ծանրանայ ժամանակակից դիպլոմատիայի խղճմտանքի վրա։

Անցնելով այժմ Եւրոպական մեծ պետութիւնների հայոց հարցի մէջ ունեցած դերին, և նրանց անհամերաշխութեան, պէտք է ասել, որ ներկայումս անհերքելի է միայն մի փաստ.—այժմ ոչ մի վեհիռ չէ կարող կայանալ թէ Եւրոպայի և թէ Ասիայի գործերի մասին, առանց Ռուսաստանի ներգործական մասնակցութեան։ Եւրոպական միւս պետութիւնների դերը բաւական պարզվել է։ Երեքպետեան դաշնակցութեան անդամները դիտմամբ հեռու են պահում իրանց այն ամենից, ինչ որ կապ ունի Հայաստանի և Փոքր-Ասիայի դէպքերի հետ, այնպէս ձևացնելով, թէ այդ դէպքերը միայն տեղական նշանակութիւն ունեն, և ոչ համաեւրոպական։ Գործնական դերմանական ցեղի աչքում ամեն ժամանակ մի ապարդիւն դիւրազգացութիւն է համարվել համամարդկային սկզբունքների համար կռուելը և տկարների ու հարստահարվածների համար միջամտելը. իսկ այժմ այդ տեսակ կռիւը և միջամտութիւնը ամենևին չեն համապատասխանում Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի նպատակներին և նկատումներին։ Աւստրո-Ունգարիայի համար այն էլ անտանելի քայլ է համարվում, որ նա թոյլատրեց Վիէննայի Մխիթարեան միաբանութեան աբբահօրը հանգանակութիւն բանալ Թիւրքիայի սովեալ և թիւրքիւրդական գազանութիւններից տանջվող հայերի օգտին. բայց մարդասիրութեան այդ գործը դարձեալ չէ կարելի համարել աւտրիական քաղաքականութեան արդիւնք. նա բղխում է իր հոգու բարձր յատկութիւններով յայտնի ալեզարդ վեհապետի անձնական կամքից։

Գուցէ ոչ մի եւրոպական պետութիւն այնքան կսկծալի ցաւ չէ զգում կատարվող դէպքերի նկատմամբ, որքան Ֆրանսիան։ Նա ունի Արևելքում իր աւանդական դարեոր քաղաքականութիւնը. Արևելքի հետ կապված են նրա փառքի և մեծութեան բազմաթիւ յիշողութիւններ։ Ամեն անգամ, երբ դէպքերի անիւը առաջ էր գցում արևելեան քրիստոնեաների հարցը, Ֆրանսիայի ձայնը թնդում էր ամենից բարձր և ամենից հեղինակաւոր։ Նոյն իսկ այժմ, երբ նրա ձեռքերը կաչկանդված են, էլի երբեմն երբեմն նա չէ կարողանում զսպել իր եռանդը ծառայելու հանրամարդկային նպատակներին և իր առաջաւոր մարդկանց բերանով քարոզում է, թէ Ֆրանսիան պէտք է ձգտի դէպի այնտեղ, ուր խօսքը վեհ գաղափարների մասին է։ Բայց ասպետական ազգի այդ անցեալ մեծութիւնը խորտակվում է, բախվելով այն դժնդակ իրականութեան, որ ստեղծվել է երկաթի կանցլերի ձեռքով։ Նա ստիպված է կրաւորական դեր խաղալ և այդ չատ լաւ ըմբռնում են նրա ամենալաւ պետական անձինք։ Ուրեմն, նոյն իսկ իրանց՝ ֆրանսիացիների խոստովանութեամբ, զուր է ֆրանսիացիներից սպասել Անատոլիայի խաղաղացման գործում ղեկավարող և վճռական քաղաքականութիւն։ Նա չէ լինելու հեղինակաւոր խօսք արտասանողը տանջված հայերի օգտին. նա չէ լինելու հայ նահանգների համար ինքնավարութիւն ձեռք բերողը։

Հայկական խռովութիւնների հէնց սկզբից եւրոպական պետութիւններից ոչ մէկը այնքան վճռական և բարձր ձայնով չը խօսեց Թիւրքամիտքը, թէ ինչու այդ վնասակար և ըմբոստ հայերը, որոնցից մի մեծ թիւ Պարսկաստանի հպատակն է, ամենափոքր թշնամութեան կամ անհնազանդութեան ոգի չեն տածում դէպի նոյնպէս մի մահմեդական վեհապետ, ինչպէս սուլթանն է։ Ինչու այդտեղ ևս ոչ մի օտար կամ սեփական ագիտացիա արմատ չէ բռնում։ Ինչու վերջապէս ռուսաց Ցարի հպատակ հայերը, որքան էլ զրպարտում են նրանց մեր թիւրքասէրները, որքան էլ հայատեացները կամենում են վայր գցել նրանց հասարակաց կարծիքի և կառավարութեան առաջ, չը նայելով նոյն իսկ այդ աննպաստ հանգամանքներին, այնու ամենայնիւ ոգևորված են՝ Ռուսաստանի վերաբերմամբ՝ անխախտելի անձնուիրութեամբ։ Ուրեմն կայ, ճշմարիտ, մի օրգանական սխալ թիւրքաց բէժիմի մէջ, որից չարունակ, պարբերաբար հեռանում են սուլթաններին հպատակ այս կամ այն ազգերը։ Ինչու հայերին յանցաւոր համարել նրա համար, որ նրանք էլ, ուրիշների նման պահանջում են գոյութեան իրաւունք, որտեղում են իրանց կանանց և երեխաների համար ապահովութիւն։ Ինչու համար մեղադրենք նրանց, երբ նրանք, տեսնելով իրանց անխուսափելի կորուստը, մի և նոյնն է՝ մեռան սուլթանին հնազանդ, թէ ապստամբվեն, նախամեծար են համարում մեռնել զէնքը ձեռքին, քան անտարբեր հանդիսատես լինել, թէ ինչպէս ջարդում և ոչնչացնում են այն ամենը, ինչ որ մարդու համար աշխարհիս երեսին ամենից թանգ և նըւիրական է։

Իրանց անելանելի դրութեան մէջ, հայերը զուր տեղն են նայում իրանց չուրջը, օգնութիւն կոչելով. նրանք չունեն այնպիսի յուսալի պաշտպաններ, ինչպէս ունեցան յոյները, լիբանանցիները, բուլգարները, սերբերը և բոլգարները։

Եւ այդպէս ճակատագիրը վիճակել է հայերին, նրանց պատմական կեանքի սկզբից մինչև այսօր, անցնել բոլոր տառապանքներից և փորձանքներից, անխախտ պահպանելով սակայն իրանց ազգային ինքնուրոյնութիւնը, իրանց հոգևոր կերպարանքը և ընտրոյ գծերը։ Կաջողվի նրանց այս անգամ էլ, ինչպէս չատ դարերի ընթացքում, պահպանել իրանց ինքնուրոյնութիւնը, թէ այդ ազգին նախասահմանված է անհետանալ XIX դարի վերջում, այն լուսաւորեալ Եւրոպայի աչքերի առաջ, որ փիլիսոփայօրէն խօսում է մարդկութեան վեհ սկզբունքների մասին, բայց չէ կատարում ամենատարրական բարոյական պահանջները,—ահա այդ հանգամանքը բացարձակապէս պէտք է ծանրանայ ժամանակակից դիպլոմատիայի խղճմտանքի վրա։

Անցնելով այժմ եւրոպական մեծ պետութիւնների հայոց հարցի մէջ ունեցած դերին, և նրանց անհամերաշխութեան, պէտք է ասել, որ ներկայումս անհերքելի է միայն մի փաստ.—այժմ ոչ մի վեհիռ չէ կարող կայանալ թէ Եւրոպայի և թէ Ասիայի գործերի մասին, առանց Ռուսաստանի ներգործական մասնակցութեան։ Եւրոպական միւս պետութիւնների դերը բաւական պարզվել է։ Երեքպետեան դաշնակցութեան անդամները դիտմամբ հեռու են պահում իրանց այն ամենից, ինչ որ կապ ունի Հայաստանի և Փոքր-Ասիայի դէպքերի հետ, այնպէս ձևացնելով, թէ այդ դէպքերը միայն տեղական նշանակութիւն ունեն, և ոչ համաեւրոպական։ Գործնական դերմանական ցեղի աչքում ամեն ժամանակ մի ապարդիւն դիւրազգացութիւն է համարվել համամարդկային սկզբունքների համար կռուելը և տկարների ու հարստահարվածների համար միջամտելը. իսկ այժմ այդ տեսակ կռիւը և միջամտութիւնը ամենևին չեն համապատասխանում Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի նպատակներին և նկատումներին։ Աւստրո-Ունգարիայի համար այն էլ անտանելի քայլ է համարվում, որ նա թոյլատրեց Վիէննայի Մխիթարեան միաբանութեան աբբահօրը հանգանակութիւն բանալ Թիւրքիայի սովեալ և թիւրքիւրդական գազանութիւններից տանջվող հայերի օգտին. բայց մարդասիրութեան այդ գործը դարձեալ չէ կարելի համարել աւտրիական քաղաքականութեան արդիւնք. նա բղխում է իր հոգու բարձր յատկութիւններով յայտնի ալեզարդ վեհապետի անձնական կամքից։

Գուցէ ոչ մի եւրոպական պետութիւն այնքան կսկծալի ցաւ չէ զգում կատարվող դէպքերի նկատմամբ, որքան Ֆրանսիան։ Նա ունի Արևելքում իր աւանդական դարեոր քաղաքականութիւնը. Արևելքի հետ կապված են նրա փառքի և մեծութեան բազմաթիւ յիշողութիւններ։ Ամեն անգամ, երբ դէպքերի անիւը առաջ էր գցում արևելեան քրիստոնեաների հարցը, Ֆրանսիայի ձայնը թնդում էր ամենից բարձր և ամենից հեղինակաւոր։ Նոյն իսկ այժմ, երբ նրա ձեռքերը կաչկանդված են, էլի երբեմն երբեմն նա չէ կարողանում զսպել իր եռանդը ծառայելու հանրամարդկային նպատակներին և իր առաջաւոր մարդկանց բերանով քարոզում է, թէ Ֆրանսիան պէտք է ձգտի դէպի այնտեղ, ուր խօսքը վեհ գաղափարների մասին է։ Բայց ասպետական ազգի այդ անցեալ մեծութիւնը խորտակվում է, բախվելով այն դժնդակ իրականութեան, որ ստեղծվել է երկաթի կանցլերի ձեռքով։ Նա ստիպված է կրաւորական դեր խաղալ և այդ չատ լաւ ըմբռնում են նրա ամենալաւ պետական անձինք։ Ուրեմն, նոյն իսկ իրանց՝ ֆրանսիացիների խոստովանութեամբ, զուր է ֆրանսիացիներից սպասել Անատոլիայի խաղաղացման գործում ղեկավարող և վճռական քաղաքականութիւն։ Նա չէ լինելու հեղինակաւոր խօսք արտասանողը տանջված հայերի օգտին. նա չէ լինելու հայ նահանգների համար ինքնավարութիւն ձեռք բերողը։

Հայկական խռովութիւնների հէնց սկզբից եւրոպական պետութիւններից ոչ մէկը այնքան վճռական և բարձր ձայնով չը խօսեց Թիւրքա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«РУССКАЯ МЫСЛЬ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

II

Սրտի ցաւով պէտք է խոստովանել, որ Եւրոպայի քաղաքական համաստեղութիւնը դասաւորված է ոչ յօգուտ հայոց հարցի նպաստաւոր լուծման։ Բոլոր այն շրջանները, որոնք կարող են ղեկավարել այդ լուծումը, խստութեամբ հրաժարվում են նրանից։ Դիպլոմատները անվրդով խաղաղութեամբ հարցը անչան են համարում. զօրեղ պետութիւնները յաւել են իրանց համակրական հայեացքը Թիւրքիայի վրա. ազգերը խուլ և անկարեկից են զոհերի ողբերին և հառաչանքներին. մահմեդականութեան կրօնական եռանդը վերակենդանացել և սաստկացել է այնքան, ինչքան քրիստոնէական բարոյականութիւնը և եղբայրսիրութեան զգացումը թուլացել են Եւրոպական ժողովուրդների մէջ. չահասիրական քաղաքականութիւնը և ազգայնական փառասիրութիւնը ժամանակակից մարդկութեան տիրապետող յատկանիշներն են դարձել։

Եւ այդպէս, իշխանութիւն ունեցող անձերի մեծամասնութիւնը, չարժանի ունենալով քաղաքական խոհեմութիւնը կամ պատրուակ բռնելով վեհագոյն պատճառներ, միաձայն հետևեալն է պնդում. «Հայերը իրանք են մեղաւոր իրանց ազգների համար. նրանք դրդեցին իրանց դէմ օրինաւոր կառավարութեան զայրոյթը և պէտք է կրեն այդ անխոհեմութեան հետևանքները»։ Ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում այն անհերքելի փաստերի վրա, որոնք հաստատված են նոյն իսկ եւրոպական պետութիւնների գործակալների միջոցով. վերջապէս ոչ օրի խիղճը չէ վրդովում այն բնական և ամենապարզ միտքը, թէ ինչու այդ վնասակար և ըմբոստ հայերը, որոնցից մի մեծ թիւ Պարսկաստանի հպատակն է, ամենափոքր թշնամութեան կամ անհնազանդութեան ոգի չեն տածում դէպի նոյնպէս մի մահմեդական վեհապետ, ինչպէս սուլթանն է։ Ինչու այդտեղ ևս ոչ մի օտար կամ սեփական ագիտացիա արմատ չէ բռնում։ Ինչու վերջապէս ռուսաց Ցարի հպատակ հայերը, որքան էլ զրպարտում են նրանց մեր թիւրքասէրները, որքան էլ հայատեացները կամենում են վայր գցել նրանց հասարակաց կարծիքի և կառավարութեան առաջ, չը նայելով նոյն իսկ այդ աննպաստ հանգամանքներին, այնու ամենայնիւ ոգևորված են՝ Ռուսաստանի վերաբերմամբ՝ անխախտելի անձնուիրութեամբ։ Ուրեմն կայ, ճշմարիտ, մի օրգանական սխալ թիւրքաց բէժիմի մէջ, որից չարունակ, պարբերաբար հեռանում են սուլթաններին հպատակ այս կամ այն ազգերը։ Ինչու հայերին յանցաւոր համարել նրա համար, որ նրանք էլ, ուրիշների նման պահանջում են գոյութեան իրաւունք, որտեղում են իրանց կանանց և երեխաների համար ապահովութիւն։ Ինչու համար մեղադրենք նրանց, երբ նրանք, տեսնելով իրանց անխուսափելի կորուստը, մի և նոյնն է՝ մեռան սուլթանին հնազանդ, թէ ապստամբվեն, նախամեծար են համարում մեռնել զէնքը ձեռքին, քան անտարբեր հանդիսատես լինել, թէ ինչպէս ջարդում և ոչնչացնում են այն ամենը, ինչ որ մարդու համար աշխարհիս երեսին ամենից թանգ և նըւիրական է։

Իրանց անելանելի դրութեան մէջ, հայերը զուր տեղն են նայում իրանց չուրջը, օգնութիւն կոչելով. նրանք չունեն այնպիսի յուսալի պաշտպաններ, ինչպէս ունեցան յոյները, լիբանանցիները, բուլգարները, սերբերը և բոլգարները։

Եւ այդպէս ճակատագիրը վիճակել է հայերին, նրանց պատմական կեանքի սկզբից մինչև այսօր, անցնել բոլոր տառապանքներից և փորձանքներից, անխախտ պահպանելով սակայն իրանց ազգային ինքնուրոյնութիւնը, իրանց հոգևոր կերպարանքը և ընտրոյ գծերը։ Կաջողվի նրանց այս անգամ էլ, ինչպէս չատ դարերի ընթացքում, պահպանել իրանց ինքնուրոյնութիւնը, թէ այդ ազգին նախասահմանված է անհետանալ XIX դարի վերջում, այն լուսաւորեալ Եւրոպայի աչքերի առաջ, որ փիլիսոփայօրէն խօսում է մարդկութեան վեհ սկզբունքների մասին, բայց չէ կատարում ամենատարրական բարոյական պահանջները,—ահա այդ հանգամանքը բացարձակապէս պէտք է ծանրանայ ժամանակակից դիպլոմատիայի խղճմտանքի վրա։

Անցնելով այժմ եւրոպական մեծ պետութիւնների հայոց հարցի մէջ ունեցած դերին, և նրանց անհամերաշխութեան, պէտք է ասել, որ ներկայումս անհերքելի է միայն մի փաստ.—այժմ ոչ մի վեհիռ չէ կարող կայանալ թէ Եւրոպայի և թէ Ասիայի գործերի մասին, առանց Ռուսաստանի ներգործական մասնակցութեան։ Եւրոպական միւս պետութիւնների դերը բաւական պարզվել է։ Երեքպետեան դաշնակցութեան անդամները դիտմամբ հեռու են պահում իրանց այն ամենից, ինչ որ կապ ունի Հայաստանի և Փոքր-Ասիայի դէպքերի հետ, այնպէս ձևացնելով, թէ այդ դէպքերը միայն տեղական նշանակութիւն ունեն, և ոչ համաեւրոպական։ Գործնական դերմանական ցեղի աչքում ամեն ժամանակ մի ապարդիւն դիւրազգացութիւն է համարվել համամարդկային սկզբունքների համար կռուելը և տկարների ու հարստահարվածների համար միջամտելը. իսկ այժմ այդ տեսակ կռիւը և միջամտութիւնը ամենևին չեն համապատասխանում Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի նպատակներին և նկատումներին։ Աւստրո-Ունգարիայի համար այն էլ անտանելի քայլ է համարվում, որ նա թոյլատրեց Վիէննայի Մխիթարեան միաբանութեան աբբահօրը հանգանակութիւն բանալ Թիւրքիայի սովեալ և թիւրքիւրդական գազանութիւններից տանջվող հայերի օգտին. բայց մարդասիրութեան այդ գործը դարձեալ չէ կարելի համարել աւտրիական քաղաքականութեան արդիւնք. նա բղխում է իր հոգու բարձր յատկութիւններով յայտնի ալեզարդ վեհապետի անձնական կամքից։

Գուցէ ոչ մի եւրոպական պետութիւն այնքան կսկծալի ցաւ չէ զգում կատարվող դէպքերի նկատմամբ, որքան Ֆրանսիան։ Նա ունի Արևելքում իր աւանդական դարեոր քաղաքականութիւնը. Արևելքի հետ կապված են նրա փառքի և մեծութեան բազմաթիւ յիշողութիւններ։ Ամեն անգամ, երբ դէպքերի անիւը առաջ էր գցում արևելեան քրիստոնեաների հարցը, Ֆրանսիայի ձայնը թնդում էր ամենից բարձր և ամենից հեղինակաւոր։ Նոյն իսկ այժմ, երբ նրա ձեռքերը կաչկանդված են, էլի երբեմն երբեմն նա չէ կարողանում զսպել իր եռանդը ծառայելու հանրամարդկային նպատակներին և իր առաջաւոր մարդկանց բերանով քարոզում է, թէ Ֆրանսիան պէտք է ձգտի դէպի այնտեղ, ուր խօսքը վեհ գաղափարների մասին է։ Բայց ասպետական ազգի այդ անցեալ մեծութիւնը խորտակվում է, բախվելով այն դժնդակ իրականութեան, որ ստեղծվել է երկաթի կանցլերի ձեռքով։ Նա ստիպված է կրաւորական դեր խաղալ և այդ չատ լաւ ըմբռնում են նրա ամենալաւ պետական անձինք։ Ուրեմն, նոյն իսկ իրանց՝ ֆրանսիացիների խոստովանութեամբ, զուր է ֆրանսիացիներից սպասել Անատոլիայի խաղաղացման գործում ղեկավարող և վճռական քաղաքականութիւն։ Նա չէ լինելու հեղինակաւոր խօսք արտասանողը տանջված հայերի օգտին. նա չէ լինելու հայ նահանգների համար ինքնավարութիւն ձեռք բերողը։

Հայկական խռովութիւնների հէնց սկզբից եւրոպական պետութիւններից ոչ մէկը այնքան վճռական և բարձր ձայնով չը խօսեց Թիւրքա-

ղով երկու քար իրար վրա է դրել, մի չէնք կառուցել»։ Պարզ չէ թէ ով է ակնարկվում այս խօսքերի մէջ։ Շինութիւն չինողը մի կողմ է մնում, բայց ուսում ունեցողի օձիքը բաց չէ թողնում յօդուածագիրը։ «Ըստ երևոյթին, ասում է նա, մեր մէջ ոչ մի հոգս ու ջանք չի խնայվում հոգևոր կրթութեան չափն ընդարձակելու ու բարձրացնելու։ Եղած հաստատութիւնները բաւական չը համարելով՝ հասարակութիւնը այս տագնապալից ժամանակում ամենագովելի նախանձախնդրութեամբ աշխատում է նորերն աւելացնել. բայց արդեօք հոգևոր կրթութիւն տալու համար՝ ահա խնդրի հիւանդոտ և ցաւալի կողմը։ Ո՞վ պէտք է կառավարէ այդ հաստատութիւնները և նոցա մէջ հոգևորական, աւետարանական, բարոյական հոգի ներշնչէ, արդեօք այդ մասին ևս մտածվում ու հոգացվում է։ Կարծել թէ բաւական է մի չէնք կանգնել մէջտեղ և մանուկներ ներս ժողովել՝ այն էլ որքան կարելի է ապականված մթնոլորտի ու փչացած հասարակութեան մէջ... առաջնորդ ունենալով մի քանի զարգացած պարոնների, որոնք նոյն հասարակութեանն են պատկանում և նրա կենցաղին մասնակցում.... այդ առնուազն մի անհամեստ երևակայութիւն է»։

Նոյն իսկ Պետերբուրգի բոլոր լրագիրները հաղորդեցին, որ Բագուում մի չատ կարճ միջոցում հաւաքվեց 270,000 ռուբլի՝ թեմական դպրոցի համար։ Զաքարիայի պապանձում պահպանեց միմիայն Էջմիածնի պաշտօնական օրգանը, որովհետև այն անագին գործ կատարողը մի մարդ է, որ այդ օրգանի սիրելիներին չը պատկանելու պատիւն ունի։ Այդ բաւական չէ։ Դեռ բագուցին չը գիտէ թէ ինչ կը դառնայ այդ դպրոցի գործը, որը նոյն իսկ դեռ չէ էլ ծրագրված,—ահա խուցերի սառների մէջ քարշ է ընկնում ողբացող փարիսեցութիւնը և տանջվելով մի թշուառ մտավախութիւնից, չը համարձակվելով բառը ամբողջութեամբ արտասանել, անուն տալ, կուրծք է ծեծում և արտասունք կաթեցնում. «ով կը լինի դպրոցի տէրը, արդեօք կրօն և հաւատ կունենայ նա»։ Անշուշտ բագուցիները ողբի առարկայ չէին դառնայ, եթէ 270,000 ռուբլին տային Էջմիածնի նոր մարդկանց և խնդրէին որ նրանք բաց անեն տիրայուսարանները ծմակներում կորած վանքերի մէջ...

Հոգևորականի առաջնորդող գաղափարը... ինչ գրաւիչ վերնագիր, և որքան գծուծ, ողորմելի միտք նրա տակ։ Գաղափարի մասին աղաղակում են նրանք, որոնք նոյն իսկ մի ամբողջ միաբանութեան պատկանող օրգանի մէջ չեն քաշվում բամբասանքներ անել նոյն միաբանութեան անդամների մասին, այն էլ այնպիսի անդամների մասին, որոնց կօշիկները վերցնելու արժանաւորութիւնն էլ չունեն իրանք, այդ աղմուկ հանողները։ Մի մեղադրէք ժողովուրդը լոկ այն պատճառով որ նա տեսնում է ձեզ։ Ոչինչ չէք չինել, գոնէ գոհ եղէք որ միջոց ունէք չինածը քանդելու։ Գոհ եղէք նրանով, որ ձրի թուղթ ու տպարան կայ և դուք գոնէ տպագրած էք տեսնում ձեր մանր մունր բամբասանքները։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

—

Լոնդոն, 10 յունվարի։ «Կայզոյ գրքի» մէջ ասված է.» Աւստրօ-ունգարական կառավարութեան առաջարկութեամբ, մարկիզ Սոլսբիւրի հոկտեմբերի 8-ին ուղարկեց բոլոր պետութիւններին մի շրջաբերական, որով առաջարկում էր Կ. Պոլսի դեսպաններին յանձնել բէֆորմների նախագծի կազմելը։ Մի և նոյն ժամանակ մարկիզը առաջարկում էր ստիպողական միջոցներ ձեռք առնել այն դէպքում, եթէ սուլթանը կը հրաժարվի ընդունել պետութիւնների կողմից հաստատված բէֆորմները։ Երեքպետեան դաշնակցութեան պետութիւնները իրանց համաձայնութիւնը տուին։ Բարոն Ֆոն-Մարշալ ասեց Լասէլին, որ վերջնական պատասխան ինքն միայն այն ժամանակ կը տայ, երբ ինքն լաւ կուսումնասիրի մի այդպիսի նշանաւոր գործումենը, սակայն Գերմանիան հաճութեամբ կը նպաստի ամեն ձեռնարկութեան, որ միաձայն ընդունված կը լինի պետութիւնների կողմից՝ Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանելու և թիւրքահպատակների դրութիւնը բարւոքելու համար, առանց խորութեան դատութեան և աղդութեան։ Շիշկին սկզբում առարկեց ստիպողական միջոցների դէմ, բայց նոյեմբերի 16-ին Օկսնոր հաղորդում է, որ կայսրը լիազօրութիւն տուեց Շիշկինին յայտնելու, որ այն դէպքում, եթէ սուլթանը կը դիմի իր սովորական ձգձգումներին պետութիւնների կողմից առաջարկած բէֆորմները գործադրելու վերաբերմամբ, ռուսաց կառավարութիւնը ի նկատի կառնի ստիպողական միջոցներին վերաբերեալ հարցը, պետութիւնների կատարեալ միաբանութեան պայմանով՝ այդ առարկայի վերաբերմամբ։ Մարկիզ Դէ-Կուրսել դեկտեմբերի 11-ին յանձնեց մարկիզ Սոլսբիւրիին մի յայտագիր, որի մէջ արձանագրված են Կամբօնին ուղարկված հրահանգները, որոնցով հրամանագրվում էր նրան միաբան գործել պետութիւնների հետ, այն պայմանով, որպէս զի նախապէս համաձայնութիւն կայանայ հետևեալ երեք կէտերի վերաբերմամբ։ 1) Թիւրքիայի ամբողջութիւնը, 2) ոչ մէկ առանձնակի ձեռնարկութիւն, 3) ոչ մի կօնդօմինիում։ Ինչ վերաբերում է ստիպողական միջոցներին, Ֆրանսիան, Ռուսաստանի նման, համաձայնվեց հարցը ի նկատի առնել, եթէ պետութիւնները միաձայն անհրաժեշտ կը համարեն այդպիսի միջոցներին դիմելը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՏԱԿ Է՞ ԹԷ...

—

Ընդամենը երեք-չորս օր առաջ, «Новое Время» լրագրի ընդարձակ էջերից, ուր չարն ու բարին միշտ խառն են լինում, փչեց մի անսովոր հով. Սուվորինի օրգանը յանկարծ սկսեց կօմպլիմենտներ անել ոչ միայն վրացիներին, այլ և չը զարմանաք,—հայերին։ Նա, վերջապէս, ասաց, որ ոչ միայն Կովկասի հայերն են Ռուսաստանի հաւատարիմ հպատակներ, այլ Թիւրքահայերն էլ միշտ ձգտում են մտնել Ռուսաստանի հովանու տակ։—Մենք իրաւունք ունէինք Սուվորինի օրգանի այդ խոստովանութիւնը դընել յաղթանակող ճշմարտութեան հաշուում, և պիտի ասէինք, որ Պետերբուրգի մեծ խաւարամիտ թերթը ձեռք է վերցնում այն կամաւոր կուրութիւնից, որին ենթարկված էր մինչև այժմ։ Բայց այդպէս անել մեր կողմից կը նշանակէր չը ճանաչել, թէ ինչ բանէ «Новое Время» լրագիրը։ Եւ իրաւ։ Այդ կօմպլիմենտների վրա դեռ երկու օր չանցած՝ Սուվորինի օրգանը տպագրեց յունվարի 6-ի համարում մի թղթակցութիւն Լէնքօրանից, որ կրկնում էր արդէն հնացած երգը այն մասին, թէ տեղացի չինովնիկները բացառապէս թուրքեր, վրացիներ, լեհեր և հայերն են։ Երկու օր էլ անցաւ, Սուվորին տպեց յունվարի 7-ի համարում մի առաջնորդող յօդուած, որ լիքն է ամենատոր ինսինուացիաներով Բագուի հայերի դէմ։ Այդ յօդուածը հիմնված է մի ինչ որ «մուսուլմանի» նամակի և մի ինչ որ Միատլովի թղթակցութեան վրա, որ տպված է լրագրի նոյն համարում։ Ինչեր ասէք, որ նիւթ դարձած չը լինեն մեծ թերթի սովորական զրպարտութիւնների համար։ Բագուում կայ Մարդասիրական ընկերութեան չինութիւնը։ Միատլով ասում է թէ հայերը այդ չինութեան մէջ համալսարան էին ուզում բաց անել։ Եւ սա հէքիաթ չէ, սա տենդային զառանցանք չէ, այլ թղթակցի հաղորդած փաստ... Հայոց եկեղեցում կատարվում է Գրիգոր Արծրունու հոգեհանդիսաը,—և ահա Բագուի «Մուսուլմանը» (ինչ հեգնութիւն, Բագուի թուրքերն անգամ լրագրութիւն են ճանաչում, հասարակական և քաղաքական հարցեր են պարզաբանում) սկսում է զանազան ստոր ակնարկութիւններ անել մի յարգելի հոգևորականի —խորէն եպիսկոպոսի մասին։ Ամենայն հայոց Կաթողիկոսը, որին Պետերբուրգում ընդունեցին մի չուբով, որ վայել է մի ամբողջ ազգի կրօնական ներկայացուցչին, դիտաւորութիւն ունէր գնալ Բագու. այնտեղ ի հարկէ, պատրաստութիւններ պիտի տեսնէին նրան լաւ ընդունելու համար։ Սուվորինն այդ պատրաստութիւնների մէջ էլ մի ինչ որ առանձին բան է տեսնում։ Եւ վերջապէս, Բագուի թեմական դպրոցի հարցը ծառայել է իբրև գլխաւոր հիմք, որի վրա կուտած են Սուվորինի այս բոլոր զզուելի ինսինուացիները։

Տեսնենք թէ Սուվորին այսուհետև էլ ինչ առասպելներ պիտի յօրինէ։ Վրդովեցուցիչ է այն խանգարված երևակայութիւնը, որ այսպիսի բաներ է ժայթքում. բայց այլ ևս չէ վրդովեցնում այն թերթը, ուր տպվում են դրանք, որովհետև ինչեր չէ անում այդ թերթը...

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Մեր խմբագրութեան մէջ Թիւրքահայ դաղթականների օգտին ստացվել են՝

1) Գեօկչայից, Մկրտիչ Բալայեանից՝ 10 ր.։

2) Բագուից, երկու մանուկներից՝ Սարգիս և Գէորգ Մելիքեաններից 628 ռուբլի, հետևեալ սիրուն նամակով.

«Մենք՝ ութամեայ Սարգիս և վեցամեայ Գէորգ եղբայրներս, առաջնորդութեամբ մեր ուսուցիչ Արամ Նաղարէթեանի և աջակցութեամբ ուսուցիչ Արսէն Բալայեանի, յունվարի 5-ին՝ Թոթախման երեկոյեան՝ շրջեցինք մեր բարեկամների ընտանիքները «խորհուրդ մեծ» երգե-

---

կան գաղանութիւնների մասին, որքան Անգլիան, բայց անգլիական քաղաքականութիւնը առհասարակ կասկած է յարուցանում, հռչակված է իբրև եսասէր և անվստահութիւն է ներշնչում։ Սակայն դժուար թէ մէկը կարողանայ բացատրել, թէ ինչու անգլիական քաղաքականութիւնը հռչակվում է ե ս ա ս է ր։ Եթէ սեփական շահերի արիւն պաշտպանութիւնը համարվում է եսասիրութիւն, այն ժամանակ բոլոր պետութիւններն էլ ունեն այդ մեղքը։ Եւ միթէ ժամանակակից եւրօպական դիպլօմատիան ուրիշ աշխարհահայեացք ունի. միթէ նրա համար գոյութիւն ունեն հանրամարդկային շահերը. միթէ նա ճանաչում է երախտագիտութեան գոյութիւնը։ Եւ միթէ կարելի է մեղադրել Անգլիային այն բանի մէջ, որ նա այդ դիպլօմատիայից յետ չէ մնում։

Անգլիայի վրա բարդած մի ուրիշ մեղադրանք աւելի ծանր բնաւորութիւն ունի. նրան մեղադրում են, թէ սիրում է գրաւումներ անել և խորութիւն չէ դնում միջոցների մէջ։ Բայց այդ սխալ է. Անգլիան չէ սիրում այնպիսի գրաւումներ, որոնց նպատակն է նիւթապէս և մտաւորապէս ստրկացնել հպատակ ազգերը։ Առևտրականարդիւնաբերական կեանքի հսկայական զարգացումը ստիպում է Անգլիային որոնել զանազան վաճառանոցներ այս կամ այն երկրում. բայց այդ երկիրները հարկաւոր են Անգլիային միայն իբրև առևտրական ձեռնարկութիւնների հանդիսարան, նրանց հարկաւոր չէ հպատակ ազգ, այլ մթերք սպառողներ։ Անգլիական տիրապետութիւնը գործ չունի այն բանի հետ, թէ ինչ լեզուով է խօսում իրան հպատակ ազգը, ինչ կրօն է դաւանում, ինչպէս է կատարում իր ժամասացութիւնը, ինչ սովորութիւններ և բարքեր ունի, ինչ աւանդութիւններ նրա համար թանգագին են։ Նա հաշծանք է յարուցանում միայն այն բանի դէմ, ինչ որ այդ սովորութիւնների և հասարակական կազմակերպութեան մէջ հակասում է բարոյականութեան և հասարակաց բարիքի սկզբունքներին. բայց նա նպաստում է այն ամեն բանին, ինչ որ կարող է մտաւորապէս և բարոյապէս բարձրացնել երկրի բնակիչներին։ Ինքն անգլիացին սիրով ուսումնասիրում է հպատակ ազգերի լեզուն, աւանդութիւնները, սովորութիւնները, պատմութիւնը, հնութիւնները և ազգագրութիւնը։ Անգլիայի նուաճած, կամ բնակեցրած երկիրները ժամանակով դառնում են անկախ տէրութիւններ, ինչպէս Միացեալ-Նահանգները. կամ ինքն անգլիական կառավարութիւնը ինքնայօժար կերպով զիջում է այն ազգին, որի հետ այդ երկիրները կապված են ազգայնական կապերով, ինչպէս Յօնիական կղզիները։

Անգլիական գրաւումները հիմնված են ըստ մեծի մասին, որքան զօրեղի իրաւունքի, այնքան և բարձր քաղաքակրթութեան, հասարակական և բարոյական բարձր կարգերի իրաւունքի վրա. նրանք ստեղծում և առաջ են տանում մարդկութեան ընդհանուր առաջադիմութիւնը։

Հետևաբար, անգլիական գաղթականութիւնը և անգլիական տիրապետութիւնը, իր համաշխարհային-պատմական նշանակութեամբ, այնքան օրինական են և բնական, որքան Ռուսաստանի կուլտուրական շարժումը միջին-ասիական խանութիւնների մէջ, որքան հօլանդական տիրապետութիւնը խաղաղ ովկիանոսի կղզիներում։ Այդ պատճառով հիմք չը կայ խիստ դատապարտել անգլիացիներին։

Անգլիան մեզանում համարվում է իբրև Ռուսաստանի օխերիմ թշնամին։ Մեր հրապարակախօսները հաստատում են, թէ նա ինարիգներ է սարքում ամեն տեղ Ռուսաստանի դէմ և ապգելքներ է յարուցանում. բայց այդպէս կարող է ասել ամեն մի պետութիւն իր հակառակորդի և մրցակցի մասին։ Այդպիսի հակառակութիւնը օրգանական բնաւորութիւն չունի, այլ ժամանակաւոր է և պայմանական։ Ասիան այն ասպարէզն է, որտեղ ամենից չատ կենդանի կերպով արտայայտվում է անգլիացիների մրցութիւնը մեզ հետ, որտեղ ամենից չատ ընդհարվում են երկու պետութիւնների ձգտումները։ Աշխարհի այդ երկու ամենամեծ կայսրութիւնները վէճի են բռնվում այդտեղ չատ հարցերի պատճառով, իսկ այժմ խիստ վէճի առիթ է հանդիսանում հայոց հարցը։ Երբ մի ակնարկ գցենք այդ հարցի ծագման վրա, երկու պետութիւնների հայեցուածքի տարբերութիւնը աւելի զգալի կը լինի։ Յայտնի է, որ Հայաստանում բէֆորմներ մտցնելու միտքը յղացաւ Ռուսաստանը։ Բայց նա աջակցութիւն չը գտաւ հէնց Անգլիայի կողմից և Ռուսաստանը սիստեմատիքական ընդդիմադրութեան հանդիպեց բոլոր կէտերի մէջ թէ Անգլիայի և թէ նրան համերաշխ պետութիւնների կողմից։ Զարմանալի չէ ուրեմն, որ ռուսաց դիպլօմատիան կասկածով վերաբերվեց այն համակրութեան, որ յանկարծ անգլիացիները սկսեցին ցոյց տալ հայերին այժմեան խառնակութիւնների ժամանակ և նոյն իսկ Թիւրքական գաղանութիւնների մասին տարածված լուրերը սաստիկ չափազանցրած երևացին։ Սակայն դիպլօմատիական սեփական գործակալների ձեռքով կատարված քննութիւնը համոզեց պետութիւններին հակառակ կարծիքի մէջ և հաստատեց այդ լուրերի տխուր իրականութիւնը։

Բայց, ճշմարիտ, ինչ պատճառով այդպիսի խիստ փոփոխութիւն առաջ եկաւ անգլիական քաղաքականութեան մէջ։ Ինչի համար նա յանկարծ այդպէս փոխեց իր վերաբերմունքը դէպի բարեկամ Թիւրքիան և սկսեց պաշտպանել անտէր և հալածված հայերին։ Որքան էլ ենթադրենք, որ անգլիական դիպլօմատիան չատ մութ կողմեր ունի, բայց չէ կարելի հերքել նրա երկու աչքի ընկնող յատկութիւնները—

հեռատեսութիւն և արթնութիւն։ Մինչև ռուս-թիւրքական պատերազմը, Փոքր-Ասիայի հայաբնակ նահանգները terra incognita էին ներկայացնում։ Հարստահարված քրիստոնեայ «բայան» կեանքի նշոյլ չէր ցոյց տալիս, իսկ հաւատացեալների պետը յղացաւ մի բարեպաշտ միտք—երկրի երեսից բոլորովին ջնջել այդ չներին, որպէս զի հող պատրաստվի ապագայ լիակատար տիրապետութեան համար Փոքր-Ասիայում։ Ահա այդ անտանելի ճնշումը, հայերին բռնի մահմեդականացնելը, քիւրդերի նախկին պատահական յարձակումները կազմակերպված գաղանութեան վերածելը չէին կարող ծածուկ մնալ ամեն տեղ սփռված անգլիական գործակալներից։ Միւս կողմից ասիական Թիւրքիայի հետ մօտիկ ծանօթութիւնը ցրեց այն նախկին ցնորքը, թէ կարելի է պահպանել օսմանեան տիրապետութեան գոյութիւնը, ներշնչել նրա մէջ կեանքի, առողջութեան և առաջադիմութեան նոր տարր։ Երկար տարիների եռանդուն բժշկութիւնը անզօր հանդիսացաւ կեանք տալու քայքայվող մարմնին։ Թիւրք տիրապետութեան քաղաքական դերը և օսմանեան տիրապետութիւնը անախրօնիզմ եղաւ, և նրա լիակատար քայքայումը ժամանակի հարց դարձաւ։ Բայց այդ քայքայումը, փառասիրական ընդհարումների համար ասպարէզ բանալով, սպառնում էր սարսափելի ցնցումներ առաջ բերել։ Այդ արիւնհեղութիւնների առաջն առնելը և ասիական նահանգներում կանոնաւոր, խաղաղ կեանք ստեղծելը միանգամայն համապատասխանում էին Անգլիայի անձնական միտումներին։

լով, և յօգուտ թիւրքահայ գաղթական երեխաների ժողովեցինք վեց հարիւր երեսուն և ութ բուբլի։

Սարգիս Մելիքեանց
Գէորգ Մելիքեանց

P. S. Ժողոված 638 բուբլուց դուրս գալով կառքի, փոխադրութեան և պօստային ծախսը՝ ընդամենը 10 բուբլի, մնացած 628 բուբլին բարեհաճեցէք, Թիֆլիսի Առևտրական բանկից՝ ներփակած № 19189 փոխանակագրով ստանալ։

Սարգիս և Գէորգ Մելիքեանցները իմ միջոցով խնդրում են տպագրել նաև ներփակած՝ ուսուցիչ Բալայեանի արձանագրած և իրանց ստորագրած նամակը, ի խրատ և ի խրախոյս հրաստ երեխաների։

Արամ Նաղարէթեանց

3) Թիֆլիսից, Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց՝ 10 բուբլի։

Տպագրում ենք Վերին-Ագուլիս և Յղնա գիւղերում, բժ. Գ. Սարգսեանի միջոցով հանգանակած 287 բուբլի (տես «Մշակ» 1896, № 152) գումարի նուիրատուների ցանկը.

Բժ. Գ. Սարգսեան 10 ր., Գրիգոր եպիսկ. Աղափիրեան 10 ր., Մելքիսեդեկ քահ. Թումանեանց 3 ր., Ալէքսանդր Սարգսեանց 10 ր. Ալէքսանդր Տէր-Մկրտչեանց 15 ր., Առաքել Ներսէսեանց 7 ր., Ս. Հախնազարեանց 10 ր., Մարտիրոս Տէր-Մկրտչեանց 3 ր., Սարգիս Աբեանց 3 ր., Նիազ Մարգարեանց 10 ր., Ալէքսան Ասլանեանց 10 ր., Ռոմ 3 ր., Գրիգոր Աբեանց 5 ր., Յովհաննէս Բէգլարեանց 5 ր., Ս. Արասխանեանց 5 ր., Ար. Փուլղարեանց 5 ր., Լ. Արասխանեանց 5 ր., Ս. Փուլղարեանց 5 ր., Յով. Փանեանց 2 ր., Քր. Յակոբեանց 5 ր., Սա. Հախնազարեանց 1 ր., Դաւիթ Ներսէսեանց 5 ր., Յ. Տէր-Գէորգեան 2 ր., կարտի փող 11 ր., Խ. Միքայէլեանց 1 ր., Փանի Փանիեանց 3 ր., Մինաս Արասխանեանց 5 ր. Տիկիններ՝ Լոյսի Սարգսեանց 5 ր., Սօնա Փանեանց 5 ր., Հեղինէ Գէորգեանց 20 ր., Զմրուխտ Շահնազարեանց 5 ր., Յոյս 5 ր., Աննա Դուլգարեանց 5 ր., Մանուչակ Յակոբեանց 5 ր., Անուշկա Ներսէսեանց 5 ր., Մարիամ Բաղդասարեանց 5 ր., Նըւարդ Գէորգեանց 1 ր., Կատարինէ Տէրեանց 10 ր., Հռիփսիմէ Բաղդասարեանց 2 ր., Գէնի 1 ր., Նոմնէ Հախնազարեանց 5 ր., Մարիամ Էլչիբեգեանց 3 ր., Աննան Արասխանեանց 3 ր., Եղիսաբէթ Փանեանց 1 ր., Գոհարվարդ Մնացականեանց 4 ր., Եւգենիա Արասխանեանց 1 ր.։ Յղնա գիւղում հանգանակած (մի քանի անուններ անորոշ են գրված) Դաւիթ Սարգսեանց 10 ր., Յովհաննէս Մէլիք-Ալլահվերդեանց 5 ր., Ռուբէն 5 ր., Ստեփան Աւագեանց 2 ր., Բաղդասար քահանայ 1 ր., Սաղաթէլ Սաղաթէլեանց 3 ր., Յովհաննէս Տէր-Օհանեան 1 ր., Ստեփան Շիկանեան 2 ր., Խաչատուր Բէգլարեանց 1 ր., Ռոմ 5 ր., Սարգիս Գասպարեանց 1 ր., Վարդան Գրիգորեանց 1 ր.։ Գումարը 287 ր.։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 1994 բուբլի 95 կոպէկ։

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄՕՏԱՒՈՐ ԹԻՒՆ ՈՒ ՎԻՃԱԿԸ

Ամբողջ ամիս ճանապարհորդելուց յետոյ, դեկտեմբերի 22-ին վերադարձայ Բասենի գիւղերից, և չատում եմ մի համառօտ տեղեկութիւն տալ Բասենի տասը հայաբնակ գիւղերում եղած գաղթականների թւի մասին։ Սթեան ապաստանված են 35 տուն, Բաշ-գիւղ՝ 55 տուն, Արմուտլի՝ 42 տուն, Զօլաղլի՝ 24 տուն, Զիւրիկ՝ 21 տուն, Ղարափունղար՝ 22 տուն, Գիւլանթաղ՝ 29 տուն, Շատան՝ 31 տուն, Յօբերան՝ 33 տուն և Ղօչաքիլիսա՝ 27 տուն։ Ցաւը դիւղերում ընդամենը 320 տուն, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է միջին թւով ութ հոգուց, հետևապէս տասը փոքրիկ գիւղերում ապաստանած են 2560 հոգի և այդ թիւը համեմատաբար չատ փոքր է միւս գիւղերի համեմատութեամբ։ Այսպիսով, մեր կարծիքն հակառակ՝ Կարսի նահանգում ապաստանած են 20,240 հոգուց աւելի հայ գաղթականներ և այդ անգին բազմութիւնը ապրում և կերակրվում է գլխաւորապէս իր արիւնակից եղբօր աղքատիկ սեղանից, որը հերոսացել է տեսնելով հալածված եղբօր թշուառութիւնը և կարծէք մոռացել է սեփականութեան գաղափարը։ Գաղթականութիւնը դեռ չարունակվում է և Զօլաղլի գիւղում եղած ժամանակ ականատես եղայ ինչպէս հարուստ ընտանիքներ թողել էին իրանց ունեցածը և այս ցուրտ ձմեռ ժամանակ՝ գիշերով փախել էին «Քեօսադաղ» կոչված լերան մօտի ճանապարհով Ալաշկերտից և հասել «Ռուսաստանի օրհնեալ հողը»։ Նրանց պատմածներին նայելով, մայր երկրում վիճակը այնքան սոսկալի է, որ մի առ մի բերել այստեղ միանգամայն բարձր է իմ ոյժերից և լրագրական յօդուածի չրջանակից դուրս։ Հատորներ են պէտք նկարագրելու այն ամենը, ինչ որ մարդ լսում է այդ բազմահալած ժողովրդի բերանից և անդադար ջղեր են պէտք միմիայն ականջով լսել կարողանալու այն, ինչ որ պատահել է իրանց կամ իրանց եղբայրակիցների հետ։ Ցեռնում ես փալատների մէջ կոլոլած մի խղճուկ և լսում մի և նոյն ժամանակ պատմութիւն նրա հարստութեան մասին, որը յափշտակվել է գազան քրդի և թիւրքի ձեռքով, և ահա նա, որ երէկ ողորմութիւն էր տալիս, որի սեղանը լի էր և առատ, այսօր անհամարձակ ժտեռնում՝ և ողորմութիւն է խնդրում ծածկելու միմիայն իր մերկութիւնը։

1894 թւի գաղթականների վիճակը նկարագրելիս, երբ պատմում էին ինձ, թէ ինչպէս մայրը միջոց չունենալով իր զաւակների մերկ մարմինները չորի կտորով ծածկելու և տաքացնելու, թաղել էր նրանց մինչև վիզը մոխրի մէջ, որը գուցէ գոյացել էր մի չաթթ առաջ վառած աթառից, ես չէի կարողանում հաւատալ, բայց աւաղ, ես աւելին տեսայ։ Ո՛չ, տեսածներս չեմ նկարագրի, որովհետև գուցէ մեր փափկասունների ջղերը տանել չը կարողանան, այլ կը բերեմ հարիւրաւոր դէպքերից միմիայն մի օրինակ—Ցպնի եղած ժամանակ ինձ դիմում են երկու հիւանդատ դէմքեր և նկարագրելով իրանց ընտանիքի դրութիւնը, օգնութիւն խնդրում։ Անմիջապէս գնում եմ նրանց բնակարանը և ինչ եմ տեսնում.—տասն և ութ հոգուց բաղկացած մի ընտանիք տեղաւորված է մի գոմում, ուր անասուն էլ չը կար, որ գոնէ չնչով տաքացնէր այդ թշուառների կացարանը։ Բոլորը հիւանդ՝ պառկած են խոտի վրա, որդին տնքում է, մայրը չէ կարող խնամել, դարմանել. մայրը տնքում է, որդին չէ կարող ոտի կանգնել և ջուր հացնել։ Ոչ մի փալաս չունէին, որ կարողանային ծածկել իրանց մերկ, հիւանդ մարմինները և հիւանդների մէջտեղը միմիայն մի հատիկ աթառ ընկած մխում էր, կարծես յիշեցնելով որ այդ մարդկանց մէջ կեանքը հաղիւ իր ջերմութեան չափ մնացած լինի։ Նայում էք, մայրը գրկած իր փոքրիկ մերկ զաւակին, աչխատում է իր չորացած ստինքով մնունդ տալ, պահպանել այդ անմեղի կեանքը և սարսափահար տեսնում է, թէ ինչպէս այդ փոքրիկ հրեշտակը սոսվից ու ցրտից ցամաքեց իր գրկում, բողոքելու Արարչին այն անօրէնութեան դէմ, որին դեռ մի քանի ամսական՝ զոհ գնաց ինքը։

Սակայն բաւական է։ Այս էլ չէի գրի, բայց հովուական պարտքս է, որ ստիպում է ինձ հրաւիրել մեր հարուստների ուշադրութիւնը այս թշուառների վրա։ Ահա եկան մեծ տօները, երբ չատերի տներում պատրաստվում են տօնածառեր, ճոխ ընծաներ, զբօսանք, երեկոյթներ և այլն։ Ո՛հ, գուցէ այդ ուրախ ժամին չատ քչերը գտնվեն, որոնք զէթ մտքով փոխադրվեն թշուառութեան վայրերը և յիշեն իրանց կարօտեալ եղբայրներին։ Գուցէ չատ քիչ ծնողներ համաձայնվեն զրկել իրանց զաւակներին սովորական զուարճութիւնից և հասկացնեն, որ տօնածառի ծախքով հոգացել են թշուառներին անհրաժեշտ զգեստը և մի կտոր հաց։ Ուստի սրանով հրաւիրում եմ բոլորիդ, սիրելի ընթերցողներ, հրաւիրեցէք ձեզ ծանօթ բոլոր անձանց, ձայն տուէք ամեն տեղ, թող օգնութեան հասնեն, թող չը մոռանան իրանց եղբայրական, մարդասիրական սուրբ պարտքը, չտալեն օգնութեան, հաւատացած լինելով որ անկորուստ և մեծ զգուշութեամբ կը բաժանվի թշուառներին իրանց տուածը։ Սա մի փորձութիւն է մեզ բոլորիս համար և մեր վարմունքից ու անձնուիրութիւնից միմիայն կորոշվի, թէ բարոյապէս ինչ աստիճանի վրա ենք կանգնած և որքան հասկացողութիւն ունենք մարդկային և եղբայրական պարտականութեան մասին, մանաւանդ այսպիսի դառն րոպէներին։

Փոխանորդ Կարսի՝
Եղիշէ վարդապետ Մուրադեանց

Կարս

ՌՈՒՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ

Վլադիկավկազում հրատարակվող «Казбекъ» լրագրի մէջ տպված է ռուսաց Վլադիմիր եպիսկոպոսի հետևեալ նամակը.

«Ցանուն քրիստոնէական սիրոյ, որ աւանդել է մեզ մեր հաւատի հիմնադիրը, Տէր Յիսուս Քրիստոսը, և որը ստեղծում է մեր սեփական փրկութիւնը, ես նուիրում եմ առաւելապէս հայերի օգտին քսան և հինգ բուբլի։ Անկեղծ կերպով ցանկանում եմ, որ իմ լուման, որը հաւանօրէն առաջինը չէ Վլադիկավկազում, չը լինի և վերջինը։ Ցոյս ունեմ, որ Վլադիկավկազ քաղաքի և Թերէքի չրջանի բնակիչները, թէ ուղղափառները և թէ մահմեդական հայերը, որոնք մեծ մասամբ ունևոր մարդիկ են, կը յայտնեն իրանց սէրը դէպի տառապեալ եղբայրները ոչ թէ խօսքով, կամ լեզուով, այլ գործով և ճշմարտութեամբ։

«Ով կեանք ունի աչխարհում և տեսնում է իր եղբօրը որ և է բանի կարօտ ու փակում է իր գութը նրանից, ինչպէս Աստուծու սէրը կարող է բնակված լինել նրա մէջ։» (Յովհ. ա. թ. գ 17)։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր փոքրիկ նկատողութիւնը, որ անցեալ անգամ տպեցինք բժ. Բ. Նաւասարդեանի մասին տպագրած յայտարարութեան վերաբերմամբ,—առիթ է տուել Թիֆլիսի հայոց երկու թերթերին, նախ, ըստ սովորականին, յիմարութիւններ գրել «Մշակի» հասցէին, և երկրորդ գովասանքներ չռաչել բժ. Նաւասարդեանին։ Առաջին կէտը, ինչպէս միշտ, այժմ էլ կը թողնենք անպատասխան։ Գալով երկրորդ կէտին՝ պէտք է յայտնենք մեր զարմանքը, թէ ինչ է դրդել յօդուածներ նուիրելու այն հարցին, թէ բժ. Նաւասարդեան չատ լաւ բան է անում, ձրի բժշկելով գաղթականներին։ Միթէ ով և իցէ ասել է, թէ դա վատ բան է։ Ակամայ յիշեցինք ֆրանսիական առածը թէ՝ «ով իրան արդարացնում է, նա իրան մեղադրում է»... Բայց ամենից անվայելը այն է, որ այդ յօդուածներից մէկի մէջ կողմնակի յարձակումներ կան բժ. Ստեփանեանցի դէմ, ասելով թէ քաղաքային բժիշկները ռռճիկ են ստանում, ուրեմն պէտք է ձրի բժշկեն աղքատներին, և գաղթականներին, թէ դեղը քաղաքային է և այլ և այլն։ Իբրև պատասխան այդ բոլորի մենք ուրիշ ոչինչ չենք գրի, այլ միայն առաջ կը բերենք Բարեգործական ընկերութեան խորհրդի վճիռները, որ կայացրել են յունվարի 10-ին։ Ահա այդ վճիռները. 1) շնորհակալութիւն յայտնել խորհրդի կողմից բժ. Ստեփանեանցին և քաղաքային բժիշկներին, այն օգնութեան համար, որ նրանք ցոյց են տալիս գաղթականներին, 2) յայտարարել, որ գաղթականներ կարող են դիմել քաղաքային բուժարանը, ուր նրանց ձրի օգնութիւն և դեղեր կը տրվեն, և 3) այլ ես դեղերի համար փող չը ծախսել բժ. Նաւասարդեանի միջոցով, այլ առաջարկել նրան միանալ քաղաքային բժիշկների հետ և դեղերը ստանալ քաղաքային դեղատնից։

Ուրիշ ոչինչ...

—

Ինչպէս յայտնի է, Իգդիրում, դեռ հոկտեմբեր ամսից, Կաթողիկոսի կոնդակով, հաստատված էր մի խնամակալութիւն Սուրմալուի վիճակի գործակալ Հմայեակ վարդապետ Արչարունու նախագահութեամբ գաղթականներին խնամելու համար։ Այդ խնամակալութեան միջոցով էր բաժանվում նպաստները գաղթականներին և ինչպէս երևում է մեր ունեցած տեղեկութիւններից, խնամակալութիւնը գործում էր մեծ եռանդով։ Սակայն Էջմիածնին, որ սովոր է ամեն լաւ բան խանգարել, յանկարծ, ի մեծ զարմանս Սուրմալուի ժողովրդի, յետ է կանչում Հմայեակ վարդապետին և նրա տեղ դործակալ ու խնամակալ նշանակում է մի քահանայ, որը բացի անդրադէտ լինելուց, չէ վայելում որ և է վստահութիւն տեղական հայ ժողովրդի և գաղթականների մէջ։ Էջմիածնի այս կարգադրութիւնը, մի մեծ դժբաղդութիւն համարելով գաղթականների համար, ժողովուրդը, ինչպէս գրում են մեզ Իգդիրից, չատալել է մի բազմաստորագիր բողոքագիր ուղարկել Վեհափառ Կաթողիկոսին, խնդրելով կամ վերադարձնել Հըմայեակ վարդապետին և կամ նրա տեղ մի այլ վստահելի և արժանաւոր անձն նշանակել։

—

Մեծ տհաճութեամբ կարդացինք «Տարազ» չաբթաթերթի մէջ հեռեռալ տողերը, «Հրատարակչական ընկերութեան» վարչութեան անձնուէր, եռանդուն անդամ իշխանուհի Մարիամ Թումանեանցը իր հրաժարականն է ուղարկել ընկերութեան վարչութեանը։ Անչափ ազնիւ գործիչը անկարող է եղել հաշտվել այժմեան բէժիմին, որ պ. Գալանթարի կլակեօրները ստեղծել են մանաւանդ վերջին ժամանակներս։ Չը պէտք է մոռանալ, որ Հրատարակչական ընկերութիւնը իր բոլոր յաջողութեամբ միմիայն պարտական է (լսեցէք-լսեցէք) իշխանուհի Մ. Թումանեանցին, իսկ նրա այդ գործին անձնատուր լինելու պատճառը մասամբ մենք էինք (լսեցէք-լսեցէք...» Դրանից աւելի անպատկառ ծաղր իշխանուհի Թումանեանցի հասցէին, որ եղել է վարչութեան եռանդուն անդամներից մէկը, մենք երևակայել չենք կարող։ Դա գովասանք չէ, այլ «արջի ծառայութիւն», որից միայն վիրաւորվել կարող է ամեն մի համեստ և բարեխիղճ գործող։

—

Հրատարակչական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Սենկեվիչի «Камо грядеши» գիրքը (Quo vadis) թարգմանված է արդէն ընկերութեան խմբագրական Մանուչարովի յանձնարարութեամբ, և չուտով պատրաստ կը լինի տպագրութեան համար»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 7-ին Վեհափառ Կաթողիկոսի կոնդակով վերջնականապէս կազմակերպվեց «Արարատ» ամսագրի խմբագրական ժողովը։ Ժողովի անդամներ նշանակված են.—Սուրբիսմ արքեպիսկոպոս՝ նախագահ, Նահապետ վարդապետ՝ Վեհափառ Կաթողիկոսի դիւանի կողմից, Սահակ վարդապետ Ամատունի՝ իբրև մատենադարանապետ, Կարապետ վարդապետ՝ ճեմարանի կողմից, Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան՝ Սինոդի կողմից, Յովհ. Յովհաննիսեան՝ ուսուցչական յանձնաժողովի կողմից և Նիկողայոս Քարամեան՝ Տպարանական վարչութեան կողմից. սրանք մտածել են հրաւիրել դրսի մարդկանցից աչխատակիցներ, բայց թէ ում, առ այժմ յայտնի չէ։ Սակայն՝ какъ не садитесь, въ музыканты не годитесь»...

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 5-ին, Ծննդեան ճրագալոյցին, այստեղի կօլոնիան չատպել էր եկեղեցի։ Պատարագին երգում էր Լազարեան ճեմարանի աչակերտներից կազմված խումբը։ Երգեցողութեան մասնակցում էր մեր երիտասարդ երգիչ Բ. Ամիրջանեան։ Պատարագից յետոյ ուսանողներից մի քանիսը «զամբարափայլ» ման գալով յօգուտ գաղթականների՝ հաւաքեցին մօտաւորապէս 250 բուբլի»։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Ծննդեան տօների առիթով աղջկան երիտասարդութիւնից Յովսէփ Բաղդոյեան Գրիգոր Գէորգեան և Նիկողայոս Բարձեմեան՝ ուսուցիչ Սարգիս Ճղմաճեանի հետ «աւետիս» ման եկան կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Թելաւի ճիւղի օգտին։ Հաւաքվեց մօտ 80 բուբլի, որը յանձնվեց ընկերութեան գանձապահին։ Այս տարի ջրօրհնէքի հանդէսը մեզանում կատարվեց սովորական կերպով։ Հասարակութեան վրա լաւ տպաւորութիւն թողեց աչակերտուհիներից կազմած երգեցիկ խումբը, որը ներդաշնակ ձայնով երգում էր։ Նոյն երգեցիկ խումբը իրանց ուսուցչի ղեկավարութեամբ ամեն կիրակի և տօն օրերին երգում է մայր եկեղեցում»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Երկու չաբաթ առաջ անյայտ չարագործները այրեցին Վաղարչապատից ոչ հեռու գտնվող Դոխա գիւղացի հարուստ Թուրք Խամայէլի երկու չեմարանները, որոնց մէջ կար 700 պուդ բամբակ, 9000 պուդ ցորեն, 1800 պուդ ոսպ, 10,000 խուրձ եօնջայ—խոտ, 15 պուդ իւղ, և ուրիշ բերքեր, կանեփ, ընջիթ և այլն։ Վնասը մինչև 15 հազար ր. են հաշուում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլադստօն եւ հայ պատգամաւորները («Daily News»)

Յունվարի 6-ին Հօվարդընում կատարվեց տիկին Գլադստօնի ծննդեան 85-րդ տարեդարձը։ Այս տարվայ տօնը նշանաւոր եղաւ այն պատգամաւորութեամբ, որ գնացել էր Հօվարդըն Անգլօ-Հայկական ընկերութեան կողմից և այն համակրական խօսքերով, որ արտասանեցին աչ-

խարհանչակ ծերունին և նրանց մօտ եկած հիւրերը։

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Հօվարդենի եկեղեցուն պատկանող ընդարձակ սենեակներից մէկի մէջ։ Ամենից չուտ եկան տիկին և պարոն Գլադստոն՝ իրանց զղեակից, յետոյ եկան նրանց որդիները և թոռները, ունենալով իրանց հետ ուղեկից Սէն Ասաֆի եպիսկոպոսին։ Յետոյ ներս մտաւ Անգլօ-Հայկական ընկերութեան կողմից եկած պատգամաւորութիւնը, որի անդամներն էին նախագահ Ստիվենսօն, գանձապահ Շելօն իր մի ազգակցի հետ, հոգևորականներ՝ պրոֆէսսոր Ագար Բիտ, Բօկչօտ, Բասեա (որ մի ժամանակ կ. Պոլսի բրիտանական դեսպանատան քահանայ է եղել) և պ. Ատկին։ Լուսամուտի մօտ, սեղանի վրա, դրված էր հայոց Մկրտիչ Կաթողիկոսի պատկերը, որը բերել էր պատգամաւորութիւնը իբրև նուէր տիկին Գլադստոնին։ Նրա ծննդեան առիթով։ Պատկերն իւղաներկ էր և նկարել էր պրոֆէսսոր Թէոդոր Աքսենտովիչ, որ Կրակովի գեղարուեստական ճեմարանի ուսուցիչ է։ Պրոֆէսսոր Ագար Բիտ և պ. Ատկին իրանց զօկտորական տիտղոսին յատուկ համազգեստներով էին։ Մանչեստրի հայ քահանայ Խաչեան ևս ղեկտով էր։

Նախ խօսք առաւ Ստիվենսօն և իր ճառի մէջ ասաց, թէ հայերի մէջ մի երախտագիտական սրտաբուղխ ցանկութիւն ծագեց մի ընծայ անել այն կնոջ, որը այնքան պաշտպանութիւն ցոյց տուեց հալածված ազգութիւններին. այդ ընծան Մկրտիչ կաթողիկոսի պատկերն է, Գրիգոր Լուսաւորչի գահի ներկայ ժառանգորդի։ Պրոֆէսսոր Ագար Բիտ յայտնեց, որ նորերս Ամերիկա կատարած իր ճանապարհորդութեան միջոցին, հանդիպեց թէ անգլիախօս ժողովրդի մէջ ինչքան մեծ բարոյական յարգանք և ազդեցութիւն է վայելում Գլադստոն։ Շելօն յայտնեց, որ նա իբրև ընկերութեան գանձապահ պէտք է յայտնի, որ Գլադստոնի աջակցութիւնը մեծապէս ազդեց նպաստների ժողովելու գործի աջողութեանը։

Գլադստոնի պատասխանը մեծ տպաւորութիւն գործեց. եղրակացութիւնը սրտաշարժ էր և հանդիսաւոր։ Ցենված բարակ գաւազանի վրա, վեր